



*Համարը*  
*Տիպը* Համաձայնագիր  
*Սկզբնաղբյուրը* ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/3(11)  
*Ընդունող մարմինը* Հայաստանի Հանրապետություն  
*Ստորագրող մարմինը*  
*Վավերացնող մարմինը*  
*Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* 27.10.1995

*Տեսակը* Հիմնական  
*Կարգավիճակը* Գործում է  
*Ընդունման վայրը* Սոսկվա  
*Ընդունման ամսաթիվը* 09.09.1994  
*Ստորագրման ամսաթիվը* 09.09.1994  
*Վավերացման ամսաթիվը*  
*Ուժը կորցնելու ամսաթիվը*

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԵՐԵՒԱՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ,  
 ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱԼԻՄԵՆՏՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ  
 ՔԱՂԱՔԱԳԻՆԵՐԻ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

## Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր

### ***Երեխաներ ունեցող ընտանիքներին սոցիալական նպաստների, փոխհատուցումային վճարումների և ալիմենտների վճարման բնագավառում քաղաքացիների երաշխիքների մասին***

Սույն Համաձայնագրի մասնակից պետություններն ի դեմս Կառավարությունների, այսուհետ՝ Կողմեր, գիտակցելով, որ յուրաքանչյուր Կողմ պետք է իրականացնի երեխաներ ունեցող քաղաքացիներին երաշխավորված պետական սոցիալական օգնություն,

ելնելով երեխաներ ունեցող և սույն Համաձայնագիրը ստորագրած պետությունների տարածքներում բնակվող քաղաքացիների իրավունքների պաշտպանության անհրաժեշտությունից,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

#### **Հ ո ղ վ ա ծ 1**

Սույն Համաձայնագրի նպատակների համար ստորև բերված հասկացությունները նշանակում են.

«քաղաքացիներ»՝ Կողմերից մեկի պետության քաղաքացիներ, որն է Կողմի տարածքում բնակվող քաղաքացիություն չունեցող անձինք և օտարերկրյա քաղաքացիներ,

«երեխաներ ունեցող քաղաքացիներին երաշխավորված պետական սոցիալական օգնություն»՝ երեխաներ ունեցող քաղաքացիներին պետական սոցիալական նպաստների և փոխհատուցումային վճարների նշանակում և վճարում՝ Կողմի ազգային օրենսդրությանը համապատասխան,

«ազգային օրենսդրություն»՝ օրենքներ, պետական իշխանության բարձրագույն մարմինների հրամանագրեր, որոշումներ, ինչպես նաև երեխաներով ընտանիքներին պետական սոցիալական օգնության և ալիմենտների բնագավառում որևէ Կողմի տարածքում գործող նորմատիվ իրավական ակտեր,

«փաստաթղթեր»՝ սոցիալական նպաստների, փոխհատուցումային վճարների և ալիմենտների նշանակման և վճարման համար ազգային օրենսդրությամբ նախատեսված ծննդյան վկայական, տեղեկանք բնակության վայրից, տեղեկանք աշխատանքի վայրից և այլ փաստաթղթեր,

«հաստատված կարգ»՝ ազգային օրենսդրությամբ սահմանված երեխաներ ունեցող ընտանիքներին սոցիալական նպաստների և փոխհատուցումային վճարների ու ալիմենտների նշանակման և վճարման չափերը և պայմանները:

#### **Հ ո ղ վ ա ծ 2**

Սույն Համաձայնագիրը տարածվում է երեխաներ ունեցող ընտանիքներին երաշխավորված պետական սոցիալական օգնության վճարումների և ալիմենտների բոլոր տեսակների վրա, որոնք հաստատված են կամ կրնադրվեն ազգային

օրենսդրությամբ:

Կողմերից յուրաքանչյուրն իր տարածքում չի հաստատի որևէ սահմանափակում հիմնված քաղաքացիության տարբերակման վրա երեխաներ ունեցող անձանց երաշխավորված պետական սոցիալական օգնություն ստանալու համար:

**Հ ո ղ վ ա ծ 3**

Երեխաներ ունեցող քաղաքացիներին երաշխավորված պետական սոցիալական օգնությունը իրականացվում է այն Կողմի ազգային օրենսդրությամբ սահմանված կարգով, որի տարածքում բնակվում է երեխան ծնողներից մեկի հետ (նրան փոխարինող անձի հետ):

Սոցիալական նպաստները և փոխհատուցումային վճարները Կողմերից որևէ մեկի զինծառայողներից և զինվորական կազմավորումների քաղաքացիական անձնակազմից երեխաներ ունեցող ընտանիքների համար, որոնք գտնվում են մյուս Կողմի տարածքում, սահմանվում են այն դեպքերում, եթե դրանց վճարումը կատարվում է աշխատանքի (ծառայության) վայրում կեցության Կողմի ազգային օրենսդրությամբ նախատեսված չափերով և պայմաններով, զինվորական կազմավորումների պատկանելության Կողմի բյուջեից հատկացվող միջոցների հաշվին, իսկ այլ դեպքերում՝ կեցության Կողմի քաղաքացիների համար նախատեսված կարգով:

**Հ ո ղ վ ա ծ 4**

Սույն Համաձայնագրով սոցիալական նպաստների և փոխհատուցումային վճարների վճարման հետ կապված ծախսերը կրում է Կողմը, որի տարածքում մշտապես բնակվում են երեխաներ ունեցող քաղաքացիներ, առանց փոխադարձ հաշվարկների, եթե այլ բան չի նախատեսված իրենց պետությունների սահմաններից դուրս աշխատող քաղաքացիների աշխատանքային գործունեության և սոցիալական պաշտպանության մասին երկկողմ համաձայնագրերով և սույն Համաձայնագրով:

**Հ ո ղ վ ա ծ 5**

Կողմերի քաղաքացիներին ալիմենտների սահմանումը և գանձումը (վճարումը) իրականացվում է այն Կողմի ազգային օրենսդրությամբ նախատեսված կարգով, որի տարածքում նրանք բնակվում են:

**Հ ո ղ վ ա ծ 6**

Կողմերը ճանաչում և ապահովում են ալիմենտների գործերով դատական որոշումների կատարումը:

**Հ ո ղ վ ա ծ 7**

Կողմերը առաջնային կարգով բանկերի և (կամ) փոստային կապի հաստատությունների միջոցով ապահովում են իրենց տարածքներում մշտապես կամ ժամանակավորապես բնակվող ֆիզիկական անձանց ալիմենտներով, երեխաներ ունեցող ընտանիքներին սոցիալական նպաստների և փոխհատուցումային վճարների դրամական միջոցների ազատ փոխանցումը և վճարումը:

Երեխաներ ունեցող ընտանիքներին ալիմենտներով և այլ փոխհատուցումային վճարների գծով դրամական միջոցների փոխանցումը իրականացվում է սոցիալապես նշանակալի ոչ առևտրային վճարումներով քաղաքացիներին դրամական միջոցների փոխանցման մասին միջկառավարական համաձայնագրով:

**Հ ո ղ վ ա ծ 8**

Սույն Համաձայնագրի իրացման նպատակով, Կողմերը.

կանցկացնեն քաղաքականություն՝ համագործակցության միջոցով ազգային օրենսդրությունների մերձեցման նպատակով,

կտեղեկացնեն միմյանց իրենց պետություններում գործող սոցիալական օրենսդրությունների և դրանց փոփոխությունների մասին, այդ թվում բնակչության աշխատանքի, միգրացիայի և սոցիալական պաշտպանության գծով Խորհրդակցական խորհրդի միջոցով:

**Հ ո ղ վ ա ծ 9**

Սույն Համաձայնագրի իրացման նպատակով մի Կողմի տարածքում հաստատված ձևով տրված փաստաթղթերը կամ դրանց հաստատված պատճենները մյուս Կողմի տարածքում ընդունվում են առանց օրինականացման:

**Հ ո ղ վ ա ծ 10**

Սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ վեճերը լուծվում են շահագրգիռ Կողմերի միջև բանակցությունների և այլ հանրաձայնաչ միջոցներով, ներառյալ Կողմերից որևէ մեկի խնդրանքով ստեղծվող համաձայնեցնող հանձնաժողովները:

**Հ ո ղ վ ա ծ 11**

Փոխադարձ պայմանավորվածությամբ, Կողմերը կարող են սույն Համաձայնագրում կատարել անհրաժեշտ լրացումներ և փոփոխություններ, որոնք ձևակերպվում են համապատասխան արձանագրություններով և հանդիսանում սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

**Հ ո ղ վ ա ծ 12**

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում նրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ մասնակից պետությունների ներպետական ընթացակարգերի կատարումը հաստատող երեք Կողմերի ծանուցումները ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

**Հ ո ղ վ ա ծ 13**

Սույն Համաձայնագիրը բաց է նրա նպատակները և սկզբունքները կիսող այլ պետությունների կողմից միանալու համար՝ նման միանալու մասին փաստաթղթերը ավանդապահին հանձնելու միջոցով:

**Հ ո ղ վ ա ծ 14**

Սույն Համաձայնագիրը կնքվում է հինգ տարի ժամկետով և ինքնաբերաբար կերկարաձգվի ամեն անգամ մեկ տարի ժամկետով: Կողմերից յուրաքանչյուրը կարող է հայտարարել սույն Համաձայնագրից դուրս գալու իր մտադրության մասին՝ համապատասխան ժամանակաշրջանի ավարտից առնվազն վեց ամիս առաջ այդ մասին գրավոր ծանուցելով ավանդապահին:

**Հ ո ղ վ ա ծ 15**

Սույն Համաձայնագրի դրույթներին համապատասխան, երեխաներ ունեցող քաղաքացիների ծագած սոցիալական իրավունքներն իրենց ուժը չեն կորցնում նաև Համաձայնագրից որևէ Կողմի դուրս գալու դեպքում:

Երեխաներ ունեցող ընտանիքներին սոցիալական նպաստների, փոխհատուցումային վճարների և ալիմենտների վճարման գծով սույն Համաձայնագրում մասնակցության ժամանակաընթացքում ծագած Կողմերի պարտավորությունները, Համաձայնագրից որևէ Կողմի դուրս գալու դեպքում, պահպանում են իրենց ուժը միչև դրանց լիովին կատարումը:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1994 թվականի սեպտեմբերի 9-ին, մեկ բնօրինակով, ռուսերեն: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության կառավարության արխիվում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետությանը կուղարկվի դրա հաստատված պատճենը:

***\*Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1995 թվականի հոկտեմբերի 27-ից:***